Ցետամոլ օշարակ **120**մգ/**5**մլ

Դեղաձևը**.** մանկական օշարակ, բալի համով:

Բաղադրությունը**.** Ակտիվ բաղադրատարը՝ պարացետամոլ 120 մգ/5մլ:
Օժանդակ նյութեր. պրոպիլեն գլիկոլ, սախարին նատրիում, գլիցերին, սախարոզ, կիտրոնաթթու, մեթիլպարաբեն, պրոպիլպարաբեն, բալի համահաղորդիչ, պանսո: Չի պարունակում էթիլ սպիրտ:

Դեղաբանական խումբը**.** Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր:

Ֆարմակոդինամիկ
Պարացետամոլը կլինիկորեն ապացուցված ցավազերծիչ և ջերմիջեցնող է: Պարացետամոլի ցավազրկող ազդեցությունը պայմանավորված է ցավի շեմի բարձրացմամբ իսկ ջերմիջեցնողը՝ ենթատեսթալամի ջերմակարգավորող կենտրոնի վրա ազդեցությամբ: Պարացետամոլն իր ցավազերծող և ջերմիջեցնող ազդեցությամբ հավասարազոր է ասպիրինին, սակայն ավելի քիչ հավանականությամբ է առաջացնում կողմնակի ազդեցություններ, որոնք հատուկ են ասպիրինին եւ ասպիրին-պարունակող դեղերին: Չի գրգռում ստամոքսաղիքային համակարգը և չի ազդում ջրաաղային փոխանակության վրա, քանի որ չի ազդում պրոստոգլանդինների սինթեզի վրա պերիֆերիկ հյուսվածքներում:

Ֆարմակոկինետիկա
Պարացետամոլը արագ է ներծծվում ստամոքսաղիքային համակարգից: Արյան մեջ առավելագույն խտությունն ապահովվում է ներքին ընդունումից մոտավորապես 10-60 րոպե անց: Պարացետամոլը տեղաբաշխվում է օրգանիզմի շատ հյուսվածքներում: Բուժական դեղաչափի դեպքում պլազմայի սպիտակուցների հետ կապվում է անհշան քանակով, որն ավելանում է դեղի բարձր խտության պայմաններում: Կիսադուրսբերման փուլը տատանվում է 1-ից մինչև 3 ժամ: Նյութափոխանակվում է առավելապես լյարդում և արտազատվում մեզով՝ լծորդակների (գլյուկուրոնիդներ և սուլֆատներ) ձևով: 5%-ից պակաս արտազատվում է անփոփոխ ձևով: Այն սովորաբար թունազերծվում է գլյուտաթիոնով լծորդմամբ, պարացետամոլի գերդեղաչափման պատճառով կարող է կուտակվել եւ առաջացնել հյուսվածքի վնասում:

Կիրառման ցուցումներ
-որպես ջերմիջեցնող միջոց – սուր շնչական հիվանդությունների, գրիպի, մանկական վարակների և այլ բորբոքային հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են ջերմության բարձրացումով, հետպատվաստումային շրջանում;
-որպես ցավազրկող – թույլ եւ չափավոր ցավ (գլխացավ, ատամնացավ, մկանացավ, հյարդացավ, վնասվածքային ցավերի ժամանակ)**:**

Հակացուցումներ

- զերզգայնություն պարացետամոլի եւ/կամ այլ բաղադրանյութերի նկատմամբ
- երիկամների եւ լյարդի ֆունկցիայի անբավարարություն
- լյարդի, երիկամների ֆունկցիայի ծանր խանգարումներ:

Կիրառման ձև ու դեղաչափումը

Ցետամոլ օշարակի դեղաչափումը կախված է երեխայի տարիքից և մարմնի քաշից: Ցետամոլ օշարակի միանվագ դեղաչափը կազմում է 10-15մգ/կգ քաշին, օրական առավելագույնը՝ 60մգ/կգ քաշին: Դեղաչափը կարող է կրկնվել յուրաքանչյուր 4 ժամը մեկ, բայց չպետք է գերազանցի օրական 5 անգամը:

Տարիք	Երեխայի քաշը կգ	Միանվագ դեղաչափ
1-3 ամսական	Բժշկի ցուցումով	
3-5 ամսական	6-8 կգ	2,5-4 մլ
5 ամսականից 1 տարեկան	8-10 կգ	4 -5 մլ
1-2 տարեկան	10-12 կգ	5-7.5 մլ
2-3 տարեկան	2-16 կգ	8 մլ
4-5 տարեկան	16-21 կգ	10 մլ
6-8 տարեկան	22 – 26 կգ	10-13 մլ
9-10 տարեկան	28 – 30 կգ	14-17 մլ
10-12 տարեկան	30 – 34 կգ	17-20 մլ

Եթե երեխայի քաշը էապես տարբերվում է նշվածից, ապա այն պետք է համապատասխանաբար ճշտվի:
Որպես ջերմիջեցնող չկիրառել 3 օրից ավել:
Որպես ցավազրկող չկիրառել 5 օրից ավել:

Կողմնակի ազդեցություն

Բուժական դեղաչափերի դեպքում կողմնակի ազդեցությունները հազվադեպ են և քիչ արտահայտված: Երբեմն արտահայտվում են սրտխառնոցի, փսխման, որովայնացավի, արյունային ռեակցիաների (թրոմբոցիտոպենիա, նեյտրոպենիա, լեյկոպենիա, ագրանուլոցիտոզ) տեսքով: Երբեմն տեղ են գտնում մաշկի կարմրությունը, եղնջացանն ու զերզգայնության այլ ռեակցիաներ:

Նախազգուշացումներ

Չկիրառել պարացետամոլ պարունակող այլ դեղերի հետ միաժամանակ:
Վաղաժամ ծնված և մինչեւ 3 ամսական երեխաների համար օգտագործելուց առաջ խորհրդակցել բժշկի հետ:
Պատահական գերդեղաչափման դեպքում անմիջապես դիմել բժշկի:
Հարկավոր է զգուշությամբ կիրառել՝ ծանր երիկամային կամ լյարդային անբավարարությամբ տառապող հիվանդների կողմից, գլյուկոզա-6-ֆոսֆատդեհիդրոգենազա ֆերմենտի ժառանգական բացակայության դեպքում, արյան ծանր հիվանդությունների ժամանակ (ծանր սակավարյունություն, լեյկոպենիա, թրոմբոցիտոպենիա);

Ցուրաքանչյուր 5 մլ պարունակում է 1.500գ սախարոզ: Եթե ձեզ հայտնի է, որ հիվանդն ունի որոշակի շաքարների անընկալիություն, այս դեղն ընդունելուց առաջ հայտնեք այդ մասին բժշկին: Սախարոզի բանակը պետք է հաշվի առնվի շաքարախտով հիվանդներին նշանակելիս:
Այն նաև կարող է վնասել ատամներին: Այս դեղը պարունակում է մեթիլ և պրոպիլ պարաբեններ, որոնք կարող են առաջացնել ալերգիկ ռեակցիաներ, հնարավոր է հետաձգված:
Այս դեղը պարունակում է պանսո (E124), որը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ:
Չգերազանցել նշված դեղաչափը:

Թողարկման ձև
Ապակե շշիկ 100մլ, չափիչ բաժակով:

Պիտանիության ժամկետը
3 տարի:

Պահման պայմանները
Պահպանել լավ փակված տարայում, մինչև 25 °C ջերմաստիճան:
Պահել երեխաներից հեռու վայրում:

Բաց թողման կարգը
Առանց դեղատոմսի: